Դարանաղցիին հետևեալ խօսքը «..նոյն Ֆրանք աբեղան՝ ... որ զձորձին ստորոտն ի վեր շրջելով ի վերայ գլխոյն առեալ և ի գուռս անկեալ գայր դէպի գերեզման որ Լուսաւորչի մատանց տեղին ասեն. ընդ այն կամէր արկանել ի գերեզմանատունն, և ազդեց զօրականացն, որ հարին ուժգին և յերկիր ընկեցին, եւ տեսին զհուրն, եդեալ ի մէջ հրոյ լուցկի եւ առին ի ձեռանէ նորին» (Դար. էջ 246-247(*)։

7.— Թէոդոս թագաւորին ուխտը Ս. Գերեզմանին (394 օգոստոս).— Երեկոյ մը, այն պահուն՝ երբ Ս. Գերեզմանի եկեղեցիի դուռները կը փակուին մինչեւ յաջորդ օրուան արշալոյսը, ուխտաւոր մը հագած երկար վերարկու մը որուն տակէն կը լսուէր զրահին շաչիւնը, սպանիացիի մը նման սև եւ իտալացիի մը պէս ժժգոյն, կը ներկայանայ Ս. Յարութեան դուռը։ Դռնապանը դժգոհութեամբ կ'ընդունի և պահապանները անախորժ կերպով կը վարուէին տաճարին գաւիթին մէջ։

Խորհրդածեալ քայլով մը Ս. Գերեզմանին եկեղեցիին սեմէն կ'անցնի, կը ծնրադրէ Քրիստոսի Ս. Գերեզմանին առջևը, ճակատը մարմարէ տապանին վը-

---

(*) Ըստ ազգային աւանդութեան, Ս. Յակոբայ վանքը եւ այլ նրուիրական տեղերը Ս. Լուսաւորչի պարգեւը կը նկատուին, «... վասրն որոյ համահաւասար ազգ եւ ազիւք եւ որդիք սրբոյ Լուսաւորչին, բացէք զաչս ներքին իմացականութեանց ձերոց եւ մի պատրիք յայնպիսեաց մոլորագնացից. այլ կատարեալ իմաստութեամբ եւ ուղիղ մտօք **ի սուրբ տունս այս դիտեցէք**, զոր հոգւոց մերոց արփիւաւորիչ Սուրբն Գրիգորիոս բազմաչարչար նահատակն եւ լուսաւորիչն մեր, **էառ կտակաւ եւ գրով զսուրբ Աթոռս զայս եւ եւ զսուրբ տեղիս**, եւ պարգեւեաց ձեզ վայելչութիւն հոգւոց եւ մարմնոց ձերոց» (Հան. էջ 142)։